

Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՏՕՆԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ...

Շարունակում Ա. Էջեմ



Առաջնորդ Սրբազանը Զատկուան պատարագը կը մատուցէ Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ (Լուսանկարները՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)



Վարդան եպս. Ազգարեան կը մատուցէ Ս. Զատկուան պատարագը՝ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ



Ս. Զատիկը՝ Հայ Աւետարանական Առաջին եկեղեցւոյ խորանէն

Ս. Զատկուան հայրապետական իր պատգամին մէջ Արամ Ա. կաթողիկոս հինգ մտածումներով զարգացուց աստուածապարգե կեանքի գաղափարը, կեանքը տեսնելով իրրե Աստուծոյ պարգեւը, իրրե տիեզերական իրականութիւն մը, իրրե միջոց եւ ո՛չ նպատակ, անոր վերանորոգիչ իրրե ուժ Քրիստոսը ներկայացուց եւ ի վերջոյ, հինգերորդ կէտով երկրաւոր կեանքէն անդին՝ յաւիտեանական կեանքին վերադարձը բացատրեց իրրե Քրիստոսի պատկերացուցած «առաւել կեանք»ին վերադարձ մը: Ան ըսաւ. «Յարութեան յղթանակով շահուած կեանքը առաւել կեանք է, Աստուծոյ շնորհքով ու ճշմարտութիւններով օժտուած կեանք, որ կոչուած է մարդը Աստուծոյ Տաճարը դարձնելու», շեշտեց վեհափառ հայրապետը:

Պատարագէն ետք եւ յետմիջօրէին, վեհափառ հայրապետը շնորհակարտութիւններ ընդունեց վեհափառների դասիցին մէջ: Կրօնական, պետական, գիւղատնտեսական անձնակազմներին, ինչպէս նաեւ Ազգային կազմակերպութիւններուն, միութիւններուն, ներկայացուցիչներ, թաղային մարմիններ, հոգաբարձական կազմեր, ազգային բարեբարներ եւ անհատ ազգայիններ իրենց շնորհակարտութիւնները փոխանցեցին վեհափառ հայրապետին՝ Ս. Զատկուան տօնի բարեմարտութիւններով ու ստացան անոր օրհնութիւնը:

ԱԶԳԱԿԻ ՖՈՆՏԻՆ

●Յակը Սարաֆեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի՝ Տէր եւ տիկին Յակը Թաշճեան՝ 35,000 Լ.:

ՄԱՀԱԶԳ

Տիրար Գէորգ Ռէճէպեան
Տէր եւ տիկին Հայկ Ռէճէպեան
Տէր եւ տիկին Սարգիս Երզնկատայեան եւ գաւակը
Տիրար Յովսէփ Ռէճէպեան
Օրիորդ Սիւզի Ռէճէպեան
Տէր եւ տիկին Պասսամ Ռըպամարտ
Օրիորդ Ռէն Ռէճէպեան
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր եւ հարազատին՝

ՍԻՐՎԱՐԴ ՌԷՃԷՊԵԱՆԻ (Ծնեալ՝ Գեորգեան)

մահը, որ պատահեցաւ 31 Մարտին, յետ կարճատեւ հիւանդութեան:
Յուզարկարտութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի 2 Ապրիլ 2002, Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, կէսօրէ ետք ժամը 3:00ին, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատուն:
●Ներկայ ընդունիլ իրրե մահազգ:
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Հըրը Թ'ապէր, Չորեքշաբթի 3 եւ Հինգշաբթի 4 Ապրիլին:

ՆԱԽԱԳԱԿ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԻՍՐԱՅԷԼԻ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ԵԿԱՏԱՍՐ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լաշուտ արաբական վեհաժողովի նախագահի հանգամանքով երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նկատել տուաւ, որ Իսրայէլի վարչապետին նախանցեալ օր յայտարարած կեցումը կը վերահաստատէ Պէյրութի վեհաժողովին որոշումը խաղաղութեան արաբական նախաձեռնութիւնը մերժող իսրայէլեան քաղաքականութիւնը: «Պահը եկած է, որ Իսրայէլ անդրադառնայ, թէ պահովութիւնը ուժով պարտադրելու քաղաքականութիւնը պիտի չյաջողի պաղեստինցի ժողովուրդը մղելու, որ հրաժարի իր իրաւունքներէն, կամ պաղեստինեան իշխանութեան պարտադրելու, որ բռնագրաւուի ոստիկան դառնայ», ըսաւ հաղորդագրութիւնը եւ աւելցուց, թէ պահը եկած է, որ իսրայէլեան ընկերութիւնը եպրակացնէ, որ մէկուկէս տարիէ ի վեր կիրարկուող իր կառավարութեան քաղաքականութիւնը իրեն ապահովութիւն չի կրնար շնորհել այնքան ատեն որ իր բանակը բռնագրաւուած կը պահէ արաբական հողեր եւ կը մերժէ գործադրել միջապային որոշումները:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱԿ ՊԸՐՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎԱՂԸ ԿԸ ՀՐԱԻԻՐԷ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ երեսփոխանները հրաւիրեց Չորեքշաբթի օր ժամը 10:30ին գումարելու խորհրդարանական լիագումար նիստ մը, քննարկելու համար պաղեստինեան շրջաններուն եւ յատկապէս Ռամալլայի մէջ իսրայէլեան ոստիկանութիւնները:

Պըրրի նաեւ պահանջեց յոյն հարցին համար գումարել արար խորհրդարանականներու միութեան արտակարգ ժողով մը: Միութեան նախագահ Ահմէտ Թահէր Պըրրիի պահանջին ընդառաջելով, որոշեց այս շաբաթավերջին արտակարգ ժողով մը գումարել Գահրէի մէջ:

ՄԱՍԼՈՅ ՄԵՆՏԻՔԱ

ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՊԱՂԵՍՏԻՆՑԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Իրրե գորակցութիւն՝ պաղեստինցի ժողովուրդին, որ կը տառապի իր շրջաններուն մէջ, մամուլ սենտիքայի որոշումով, այսօր՝ Երեքշաբթի 2 Ապրիլ 2002, կէսօրուան ժամը 12:00էն 12:30 աշխատանքը կը դադարի լիւրանանեան օրաթերթներու խմբագրատուններէն ներս, ինչպէս նաեւ մամուլ սենտիքայի կեդրոնատեղիին մէջ կը կատարուի հաւաք մը, մասնակցութեամբ սենտիքայի անդամներուն եւ մամուլի ներկայացուցիչներուն:

ՄԱՐՈՒՔԻ ԹԱԳԱՒՈՐԸ ՄԵԿՆԵՑԱԻ ՊԷՅՐՈՒԹԷՆ

Մարտի Մոհամէտ Զ. Թագաւորը երէկ Պէյրութէն մեկնելէ առաջ հեռաձայնեց նախագահ ԿՕՐ. Էմիլ Լաշուտի եւ անոր հետ քննարկեց պաղեստինեան շրջաններու պայթուցիկ վիճակը դարձանելու միջազգային եւ արաբական ճիգերը, ինչպէս նաեւ արաբական աշխատանքները շարունակելու ձեւերն ու միջոցները:

Նախագահ Լաշուտ շնորհակալութիւն յայտնեց Մարտի Թագաւորին՝ Պէյրութի վեհաժողովին մասնակցութեան համար, հրաւէր ուղղելով, որ պաշտօնական այցելութիւն կատարէ Լիւբանան, քննարկելու երկկողմանի յարաբերութիւնները, նաեւ ներկայ գտնուելու Փրանսախօս երկիրներու կազմակերպութեան գերաստիճանին:

Մոհամէտ Զ. Թագաւոր շնորհակալութիւն յայտնեց իր գտած ջերմ ընդունելութեան համար:

ԿՈՒՉՈՒԻ

●Ոսկերչական մոմի վրայ աշխատող վարպետ մը: Դիմել հեռ. 01-251251 եւ 01-246246:

ԿՈՒՉՈՒԻՆ

●Ոսկերչատան մը համար գիրքն քար գամողներ: Հեռ. 03-768282:

ԲԱՄԵՏԱՌՈՒՄՈՒՄ

Տէր եւ տիկին Չաւէն եւ Մարալ Հաւաթեան բախտաւորուած են աղջիկ պատկով մը շՈՂԱԿ Պէյրութ, 28 Մարտ 2002

Գրատուն ՈՍԿԵՂԱՐ

●Ունիք ձեր փնտռած գիրքերը եւ բառարանները
●Ոսկերչարի ԵՐԱԶԱՀԱՆԸ, Երգարան եւ Մանկական գիրքեր
●Չարգացումի միահատոր Համայնագիտարաններ՝
Պուրճ Համուտ, Ս. Փրկիչ եկեղեցւոյ կից Հեռ.01/264750 P.O.Box 11-8877 Beirut Lebanon

ՄԿԵՆՏՐՈՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Վերջին եօթնամյակներու ժամերուն, պաղեստինեիսրայէլեան տագնապը բոլորովին նոր փուլ մը թեւակոխեց: Պաղեստինցիներուն դէմ յայտարարած իր պատերազմին մէջ Իսրայէլ անցաւ բոլոր կարմիր գիծերը: «Ահաբեկչներ» ձեռքարկելու, կամ այսպէս ըսած՝ «ահաբեկչութիւնը» սանձելու պատրուակով, Թէ Աիւի ինք ահաբեկչութիւն, պետական ահաբեկչութիւն կը գործէ մեծ տէրութեանց «կոյր» աչքերուն եւ «խուլ» ականջներուն դիմաց:

Բայց այսօր ո՞վ չի գիտեր, թէ փոքրերը կրնան կարմիր գիծը շրջանցել միայն, երբ կանայ լոյս ստացած են մեծերէն: Իսկ նորութիւնն է Ուաշինկթընի եւ Թէ Աիւի շերտ սիրաբանութիւնը: Չարմանալին, ընդվզեցուցիչը, Թէ Աիւի ինք ահաբեկչութիւնը կը գործէ իր յայտարարութիւններէ, գործաթոյլ ու երկնոյ յայտարարութիւններէ, գործապահանջ կայ յօրակցութիւն արար եղբոր՝ պաղեստինցիներուն: Պատկերասփիւռի կայաններէն ցուցադրուող պաղեստինցի ժողովուրդին անբացատրելի տագնապը, իսրայէլացիներուն ի գործ դրած կազմակերպուած ու ծրագրուած սպանդը, առաւել՝ անհասարկ այս կրիւն նուատացում առթող իրողութիւնը: 250 միլիոն բնակչութիւն հաշուող արաբական երկիրներու ժողովուրդները թէ եւ կ'եռան, կ'ընդվզին, եր տագնապին ի տես պաղեստինեան շրջաններուն անկրկնելի տագնապին, սակայն արաբ ղեկավարները կը շարունակեն կրաւորական թաղաքականութիւնը: Իսկ անան պարագաներու՝ լուրջութիւնը մեղսակցութիւն չէ՞ դաին:

Ո՛ր մնացին արաբական վեհաժողովին որոշումները, պաղեստինեան դատին պօրակցութեան լորձնաշորթը ճառերը: Միայն խօսք էին անոնք: Այսպէս նուատացում քա՛ն է: Ժամանակն է խօսքէն անցնելու գործի, Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի յայտարարած ամբողջական պատերազմին դիմաց արաբական մէկ ու անոր ճակատ կապ մէկու: Այլ խօսքով՝ արբելու արաբական աշխարհի ճակտին մտօրի պիտակը: Ամերիկեան կնքահայրութեանը Իսրայէլի խափնի դատապարտելի արարքներուն դիմաց, առնուապ առաջին հերթին արաբական աշխարհին կ'ակնկալուի խլել յարաբերութիւնները Թէ Աիւի հետ, այնպաղ օժանդակութիւն հասցնել պաղեստինցի քաջարի ժողովուրդին, որ հակառակ բոլոր դժուարութիւններուն կը տոկայ ի խնդրի իր արդար իրաւունքներուն: Պաղեստինցի ժողովուրդը շատ ունի որոշեցրած է նահատակութեան ուղին: Պաղեստինցի կը գիտակցի սակայն, որ միայն արիւնով անկարելի է կերտել հայրենիք, թէ եւ ան իր արիւնը երբէք չչլլացաւ. անհրաժեշտ է նաեւ դիւանագիտական, տնտեսական, փնտրական անսակարկ նեցուկ վերցնելու Իսրայէլի նետած ձեռնոցը: Հետեւաբար արաբական աշխարհը պարտի ամէն գնով իր քրտիքը եւ շաղախել Պաղեստինի պատարագութեան դատին, որ վերջին հաշուով դատն է ամբողջ արաբական աշխարհին: Միայն միասնական ու կարող շարքերով, քաղաքական վճռական ու յստակ կեցումաբով կարելի է դիմադրել իսրայէլեան ըստ ամէնայնի ապօրինի ոստիկանութիւններուն, ամուր պատմութեան շեշտելի սխտական օտարապաշտ քաղաքականութեան դիմաց եւ պարտադրել արաբական ուրոյն ինքնութիւն եւ հողային արդար իրաւունքներու հատուցում:

ՀՐԱԶՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՉ ԿՈՒՂԴԵՆ...

Շարունակում Ա. Էջեմ

Դը կը պաշտպանէ ամբողջ արար ազգին արժանապատուութիւնը, հետեւաբար ամբողջ ազգը պարտի զօրավիգ կանգնելու անոր:

Ժողովը նաեւ ողջոյնի խօսք ուղղեց լիբանանեան դիմադրութեան՝ Մագաբէհ Շըպապի մէջ կատարած գործողութեան համար:

Ժողովականները նաեւ դրուատեցին Սուրիոյ եւ Լիբանանի նախագահներ Պաշչար Ասատի եւ Էմիլ Լաշուտի ինքիֆատային եւ դիմադրութեան աներկ-բայօրէն գորակցութիւն յայտնող կեցումները եւ դատապարտեցին Միացեալ Նահանգներու կողմնակալ կեցումները ու լուրջութիւնը ի տես Շարոնի գործած անմարդկային ահաբեկչութեան:

Ժողովը կոչ ուղղեց աշխարհին՝ դատապարտելու այս ընթացքը, իսկ արաբական պետութիւններուն՝ Միացեալ Նահանգներու դէմ գործածելու «տնտեսական զէնքը»:

Ժողովը նաեւ հաստատեց անհրաժեշտութիւնը զէնք հասցնելու ինքիֆատային: Վերջապէս, ժողովին որոշուեցաւ, որ այսօր կէսօրէ առաջ ժամը 11:00ին լիբանանեան եւ պաղեստինեան կուսակցութիւններու պետերը Պասա Կուսակցութեան կեդրոնատեղիին մէջ պիտի գումարուի ժողով մը, քննարկելու համար այս հարցերը: Ժողովին պիտի մասնակցի նաեւ Զ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը կը տեղեկացնէ, որ իր կողմէ յայտարարուած ժողովրդային ծառայութիւններուն առընթեր, այսուհետեւ կը ստանան նաեւ պետական պահպան գործառնութիւններու օրինականացման վերաբերող հարցեր: Իմնողները պետք է ներկայանան «Շաղկոյեան» կեդրոն, Երկրորդ յարկ, առաւօտեան ժամը 9:00էն կէսօրէ ետք ժամը 5:00, Երեսփոխանական Գրասենեակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01-259881 եւ 01-242582 թիւերուն:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԴԱՏ ՄԸ, ՈՐ ԴԵՌ ՄԵՐԸ ՉԵՆՔ ԶԳԱՐ

ԹՐՔԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Նորագրին ակնարկությունը կ'երթայ «Նիւ Եորք Լայֆ» ապահովագրական ընկերությունից դեմ բացած դատին: Առերկր քան երկու տարի անցած է այս դատին սկսելուն, եւ եթէ չհաշուենք մամուլին մէջ պարբերաբար լոյս տեսնող հաղորդագրությունները, այն տպաւորությունները կ'ունենանք, որ ընդհանրապէս ըսելիք կամ ընելիք չունինք այս մասին:

Կը մտածեմ. արդեօք այնքան լեցուն է մեր քաղաքական շարժերու օրակարգը: Կամ թերեւս դեռ երկու տարի անցած է մեր քաղաքական շարժերու ինչ-որ տեղ եւ ինչ-որ շափով մեղադրող դերին մէջ տեսնելու, երբ հարցը Հայկական Զեղասպանության հետ աղերս ունենայ: Եւ վերջապէս, կը մտածեմ, որ մարդիկ կը փորձեն հետո մնալ այս դատին, կամ լուռ անցնիլ անոր վրայէն, պարզապէս առաջնորդուելով ամբողջական մտածողութեամբ: Վերոնշեալ պատճառներով այս դատը անձնական նախաձեռնությունը մը կը համարուի: պարզապէս խելացիի մը արկածախնդրությունը՝ լաւ դրամ շահելու համար:

Վերջապէս արդիւնքը միեւնոյնն է: Հայկական Զեղասպանությունից հետեւանքով մեր ժողովուրդին կրած ահաւոր նիւթական վնասներուն վերատիրացման իրաւական առաջին քայլը առնուած է արդէն, եւ մենք այս դատը իրրեւ մեր դեռ չենք գգար: Բայց այս մասին կը շարունակենք ակերի յետոյ: Նախքան այդ, նպատակաշարժար պիտի ըլլայ ընդհանուր դիմորս մէջ ներկայացնել այս դատը իրրեւ մերը դեռ չենք գգար բայց այս բանի իր պատմական անցեալով եւ ներկայիս անոր դիմադրուած խնդիրներով:

Ինչպէս յայտնի է, այս դատը բացուեցաւ 22 Նոյեմբեր 1999ին իրաւաբան Վարդգէս Եղիաշեանին կողմէ: Այս գործին մտադրացման մասին խօսելով՝ Եղիաշեան կը յայտնէ, թէ այս դատին ձեռնարկելու միտքը յառաջացած է, երբ կարողացած է Հայաստանի Հանրապետության Ստրիկտիվացիոն գործը, ուր օսմանեան թուրքերի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանը կը պատմէ թալէմի փաշայի հետ իր մէջ հանդիպումին մասին: Ստրիկտիվացիոն կը յայտնէ, որ թալէմի իրմէ պահանջը է թուրք չայերու անուանները, որոնք կեանքի պահպանութիւնները գնած էին ամերիկեան ընկերություններէ: Ստրիկտիվացիոն կը յայտնէ, որ ինք կարողանալու մերժած էր թալէմի պահանջը: Առերկր ու «Միապա Սան» թերթին տուած յոդուածի մը մէջ Ստրիկտիվացիոն պիտի գրէր, որ թալէմի ունենալով այդ ցանկը՝ նախ պիտի ստուգէր սպանությունները թուրք ապահովագրուած Հայերուն, ապա պիտի ստուգէր, որ անոնց ժառանգորդները եւս սպանուելու, որպէսզի կարենար թրքական կառավարությունից անուանով այդ գումարներուն ժառանգորդ դառնալ:

Մինչեւ Ա. Ալխարհամարտին բռնկուած, թուրքերի մէջ գործող տարբեր տեսակի ապահովագրական ընկերություններուն թիւը 100ը կ'անցնէր: Իսկ ասոնցմէ կեանքի ապահովագրություն վաճառողներուն թիւը 59 էր: Թուական այս պատկերը մասնամասնելու համար նշենք, որ այստեղ կը գործէին 29 գերմանական, 20 ֆրանսական, 19 անգլիական, 13 աստրիական, 7 գուբերգիական, 6 իտալական, 3 ամերիկեան, 2 ռուսական, 2 յունական եւ պոլիարական, ռուսական, թրքական եւ նորվեգիական մէկական ընկերություններ: Հետաքրքրական է, որ այս բոլոր ընկերություններու յաճախողներուն բացարձակ մեծամասնությունը եղած են կայսրություն ոչ իսլամ քաղաքացիները:

Կեանքի ապահովագրություն վաճառող ընկերություններու փաղանգին մէջ ամէնէն առաջատար դիրքի վրայ էր Ֆրանսական «Լ'Ինիմո Վի» ընկերությունը: «Լ'Ինիմո Վի»-ի գլխաւոր մրցակիցը կը համարուէր «Նիւ Եորք Լայֆ»: Այս վերջինը իր գործունէութիւնը թուրքերի մէջ սկսած էր 1895ին եւ շարունակած է մինչեւ 1914, Ա. Ալխարհամարտի սկիզբը: «Նիւ Եորք Լայֆ»-ի արհիւններուն համաձայն, 30 Մարտ 1915ի տուեալներով, ընկերությունը թուրքերի մէջ ունեցած ապահովագրողներուն թիւը 8007 էր: Ինչպէս կը պարզուի, այս ապահովագրողներուն շուրջ 70 տոկոսը Հայեր էին:

Պատերազմի սկսման հետ «Նիւ Եորք Լայֆ» դադարեցուց իր գործունէությունները թուրքերի մէջ՝ պահելով ընդամենը գրասենեակ մը Պոլսի մէջ: Երեսուցի փակեց նաեւ այս գրասենեակը եւ իր սահմանափակ գործառնությունները (ընդհանրապէս գանձումներ) շարունակեց կատարել ամերիկեան դեսպանատան միջոցով: Մինչեւ պատերազմի աւարտը, «Նիւ Եորք Լայֆ» արդէն ամբողջովին լուծած էր իր գործունէությունները թուրքերի մէջ: Քիչ մը աւելի ուշ, 1921ին, նամակով մը ընկերությունը իր յաճախողներուն «Կը տեղեկացնէր», որ ապահովագրական իր համաձայնագրերը վերապահովագրած էր Ֆրանսական «Լ'Ինիմո Վի»-ի հետ: «Կը տեղեկացնէր» խորքին մէջ անուանական էր, որովհետեւ բոլորը յայտնի է, թէ մեր ժողովուրդը ինչ վիճակի մատուցած էր մինչ այդ: Ի հարկէ, համաձայնագրերուն վերապահովագրուած Ֆրանսական ընկերությունից հետ հակաօրինական էր պարզ այն պատճառով, որ արտիկա տեղի ունեցած էր առանց յաճախողներուն համամտություն ունենալու:

Յետադարձ այս ակնարկը ամբողջացնելու համար ակնցնեմ, որ 1919ին «Նիւ Եորք Լայֆ»-ի փաստաբաններուն իսկ գնահատուածով, Հայերու գնահատման սպանություն պատճառով ընկերությունից հաւանական կորուստի հաշուեկազմարը ակերի քան 7 միլիոն ամերիկեան տոյար կը հանդիսանար: Օրին «Նիւ Եորք Լայֆ»-ի փաստաբանները այս գումարին մասին նամակով մը ներկայացուցած էին Ամերիկայի արտաքին գործոց նախարարությունից այն յոյսով, որ ամերիկեան կառավարությունը ճշնում կը բանեցնէ թուրքերի վրայ՝ այս կորուստին փոխարին հատուցում ստանալու համար: Նամակը թրքական կառավարությունը պատասխանատու կը նկատէր այս կորուստի հայաստան քաղաքականությունից: Նշենք, որ այս գումարին այսօրեայ գնողական արժէքը գլխաւորապէս համար գայն պէտք է բազմապատկել 17ով:

Անցնող 85 տարիներուն ընթացքին «Նիւ Եորք Լայֆ» փաստորէն սեփականացուցած է այս գումարը, եթէ չհաշուենք այս չնչին տոկոսը, որ վճարուած էր Հայ ժառանգորդներուն՝ պատերազմին յաղորդող երկու տասնամեակներու ընթացքին: Յիշենք նաեւ, որ ամէն ժառանգորդ չէ, որ բարտը ունեցաւ ստանալու իր արդար հատուցումը: Անտեղի ձգձգումները եւ ուշացումներու պատճառով, ինչպէս նաեւ

տարբեր պատրուակներով, «Նիւ Եորք Լայֆ» քանաց խուսափիլ իր նիւթական պարտաւորությունները կատարելէ:

Դժբախտաբար այսօր եւս «Նիւ Եորք Լայֆ» պատասխանատուներէն խուսափելու նոյն խաղամիջոցներով կ'առաջնորդուի իր դէմ բացուած դատի պաշտպանություն մէջ: Պատրուակ բռնելով ծախուած ապահովագրական համաձայնագրերներուն տրամադրությունները (բոլոր իրաւական հարցերու ընկերությունից հետ, Փարիզի կամ Լոնտոնի դատարաններուն մէջ լուծելու առնուող), ինչպէս նաեւ հակասահմանադրական համարելով Քալիֆորնիայի կառավարությունից կողմէ ընդունուած Զեղասպանությունից գոհեցու ժառանգորդներու իրաւունքները պաշտպանող թիւ 354,4 յօդուածը, «Նիւ Եորք Լայֆ» նոյնիսկ ինուստիտուտ հայութեան դէմ ի գործ դնելու արդէն փաստը, որ ամերիկեան կառավարությունը պաշտոնապէս չէ ճանչցած Հայկական Զեղասպանությունը եւ թուրք-ամերիկեան զինակցությունը ՕԹԱ-նի ծիրէն ներս կրնայ վտանգուել, որովհետեւ իրրեւ թէ այս դատին շարունակությունը Քալիֆորնիայի մէջ համագործ է Հայկական Զեղասպանությունից հետ: Ինչ իստք, որ «Նիւ Եորք Լայֆ»-ի բոլոր առարկությունները հիմնականօրէն մերժուեցան շրջանային դատաւոր Քրիստինա Ենայտրի կողմէ:

Դատաւոր Ենայտրի որոշումը այս դատին առաջին հանգրուանը կ'ամբողջացնէ: Առայժմ պէտք է միայն յուսալ, որ «Նիւ Եորք Լայֆ» անդադառնայ, որ քանի մը միլիոն տոյարով Հայ ժողովուրդի աչքին փոշի ցանելու կամ գոհեցու ժառանգորդները իրրեւ «money grabbing Armenians» ընդունելու վերաբերմունքը վայել չէ իր համբաւին: Այս առումով՝ «Նիւ Եորք Լայֆ» մեծապէս թերազատեց շայցուողներու ազգասիրական մղումը այս գործին մէջ: Յատկապէս կարելի չէ չդիտարկել գլխաւոր հայցուող Մարթին Մարուիթեանի եւ մնացեալ 11 հայցուողներու ազգային առողջ կեցուածքը, երբ կտրականապէս մերժեցին գրեթէ տարածուած բոլոր փորձերը, նոյնիսկ երբ «Նիւ Եորք Լայֆ» իւրաքանչիւրին առաջարկեց հատուցել իրենց ակնկալածէն ակերի մեծ գումարներ: Թերեւս քիչ մը վիպական երեւի այս պատկերը մեր ապրած գերսպառողական այս ընկերությունից մէջ: Փաստը սակայն կը մնայ փաստ, որ անոնք մերժեցին: Բոլորն այ նախանձախնդիր էին չտեսնահարելու մնացեալ ժառանգորդներու իրաւունքները եւ այդ ձեւով չպղծելու անոնց նահատակ ազգակիցներուն յիշատակը:

Կասկած չկայ, որ Վարդգէս Եղիաշեանի սկսած դատը «Նիւ Եորք Լայֆ»-ի դէմ Հայ Դատի հասկացությունից նոր սահմանում մը կու տայ: Սեղանի վրայ կը բերէ Զեղասպանությունից պատճառով մեր ժողովուրդին կրած նիւթական ահաւոր վնասներու վերադարձումը հարցը: Կը մնայ, որ մենք ճշդեղ մեր կեցուածքը մաս ուղղություններ: Կը շարունակե՞նք կրաւորական դիտողի դերին մէջ մնալ, թէ կ'որոշենք մեր թեւերը սոթեմ եւ գործի անցնիլ, կախուած է մեզմէ: Չեմ ուզու մտածել, որ կորսնցուցած ենք մեր քաղաքական կեանքապետությունը՝ կարենալ կացություն տեղեկու որեւէ տուեալ պահին կամ առիթին: Ոչ այ կ'ուզեմ խորհիլ, որ կորսնցուցած ենք նաեւ մեր քաղաքական շրջանացությունները՝ մեր հասկացածէն կամ գիտցածէն անդին եղածին կարեւորությունը չգիտակցելու կամ կարենալ ըմբռնելու իմաստով: Հասկընալի է, որ պահանջարկի արտական այս մեթոտը քաղաքական ծրագրումի իմաստով դեռ հստակեցած ու զարգացած չէ մեր մէջ: Գիտակից եմ, որ դեռ չունինք պատմագիտական եւ իրաւական անհրաժեշտ ենթահիմունքներ՝ ձեռնարկելու համար նման գործի: Բայց հիմա, որ իրագործուած նախընթացը ունինք, չենք կրնար կռնակ դարձնել այս մարտահրաշխաններուն:

Ապահովագրական ընկերություններու թուրքուկում մը մեր այս ակնարկին մէջ փտահարար պատկերացում մը կու տայ ակնկալուող աշխատանքի ծաւալին մասին: «Նիւ Եորք Լայֆ»-ը ընդամենը մէկն է այդ քանի մը տասնեակ ընկերություններէ: Դեռ մինչեւ 1996 Ֆրանքո-անգլիական սեփականություն եղած Օսմանեան գրամատան մէջ Հայերու պահ դրած գումարներուն ճակատագիրը, գերմանական «Տեօ Պանթ»-ի պատկանած Պերլին-Պաղտատ երկաթուղագործին վրայ բռնի աշխատած Հայդուդներուն իրաւունքները միայն քանի մը օրինակներ են, որոնք պէտք է ուսումնասիրուին եւ համապատասխանօրէն հետապնդուին: Կ'ենթադրեմ, որ ժամանակը եղած է, որ արեւմտեան այս ընկերությունները եւ ի հարկին նաեւ պետությունները հաշի տան մեր ժողովուրդին: Հակառակ պարագային, գանոնք մեղսակից պէտք է համարել Զեղասպանությունից, այն իմաստով, որ անոնք մասնակից եղած են Զեղասպանությունից աւարին:

Հակադրուելու կամ թերգնահատելու իմաստով չէ, որ կ'ըսեմ, սակայն ինծի կը թուի, որ Հայկական Զեղասպանությունից ճանաչման խնդրը, որքան ալ կարեւոր, կարծէք մտասեւեւած ըլլայ մեր ուղեղները այնքան մը, որ եթէ վաղի իսկ, հրաշքով մը, Ամերիկայի Քոնգրէսը ընդունի Զեղասպանությունից պատմական իրողությունը, գաղափար կամ պատկերացում չունինք, թէ ինչ պէտք է ըլլայ անոր յաղորդող մեր քայլը: Կարծէք այս հարցը սահմանափակած ըլլայ մեր քաղաքական մտահորդոնքը, մեր միտքը քաղաքացիութեան: Պէտք է նաեւ ճանաչուէն անդին տեսնել ու մինչ ճանաչումը Հայ Դատի գործունէությունից նոր ուղիներ բանալ: Այս առիթով ըսեմ նաեւ, որ այս պահուած գրական ընկերություններու պատմական արհիւնները Հայկական Զեղասպանությունը մատնանիչ ընող ու փաստակող հարկին թղթածարները կը բողբանակեն: Ահաւարկ Հայկական Զեղասպանությունից փաստը ընդգծող ուրիշ աղբիւրներ մեր պատմաբաններուն համար:

Միայն «Նիւ Եորք Լայֆ»-ի դատով մօտէն հետաքրքրուողները օր մը կրնան հասկնալ ու ըմբռնել, թէ ինչպիսի վիթխարի եւ երկարաշունչ աշխատանք կը կարօտի անոր իրագործումը: Նման ծաւալի գործերու ծրագրումն ու ձեռնարկումը յատուկ են միայն այն անձերուն, որոնք տեսիլք ունին եւ յարատեւելու կարք:

ԱՐՄԱՆՑ ՊԱՏՈՅՑԵԱՆ

Յապաւուած «ԱՍՊԱՐԷԶ»-էն

Ստորեւ կու տանք «Թուրքի» քերթից մէջ լոյս տեսած յօդուած մը, որուն հեղինակը՝ Երմազ Եօզուրնա կանգնողաբան Երուսաղէմի Սիւրբան կոկիլասեան տեղեկագիրին եւ Հայկական Զեղասպանութեան որոշումից:

Յօդուածագիրը չի մոռնար մեղադրելու «կոմիտաճի» ութուցն ու «ղաշնակցականի գլուխ» ունեցողները, որոնք ըստ իրեն, կը կանգնին Թուրքիոյ հետ Հայաստանի յարաբերութիւններու խանգարման ետից...

Հայկական Զեղասպանությունը կարգախօս մը դարձած է բոլոր այն երկիրներուն համար, որոնք կը կարծեն, թէ թուրքիան մօթով պիտի ձգեն: Վստահ ենք, որ Եւրոխորհրդարանի հակայ սրահին մէջ չկան նոյնիսկ տասը երեսփոխաններ, որոնք գիտնան թէ ինչ անցած-դարձած է 1915ին: Ականջէն ականջ մակերեսային տեղեկությունները, թրքաւտեց շրջանակներու կողմէ կատարուած թելադրությունները, Հայկական քարտեզական հրատարակությունները եւ յայպիսի ազդեցություններուն տակ, օրուան նորոյթէն ետ չմնալու բարոյթով, ոմանք բաներ մը կ'ըսեն, որոշումներ կու տան, բայց որեւէ կայ չունին երկրուան կամ այսօրուան ճշմարտություններուն հետ: Ասիկա հակաթուրք, ցեղապաշտ, խաղաղությունը խանգարող եւ հակազիտական վերաբերում մըն է:

Ամբողջ այս խեղճատակությունից ետին Ամերիկայի եւ Ֆրանսայի մէջ Օսմանեան շրջանից գաղթած ուժեղ Հայկական Սփիւռքի հարիւր տարուան աշխատանքը կայ: Բայց եթէ մեր շատ փոքրիկ դրացին, երիտասարդ Հայաստանի Հանրապետությունը «Թուրքիոյ եւ թուրքերու հետ մեր յարաբերությունները կը խանգարէ», հրաժարեցէք այս գործէն՝ ըսէ՛ք, այս խայտառակությունից այ վերջ պիտի գտնէ: Տեմիլիլի, Էօզալի, թուրքէջի նման մեր ամէնէն ազգու պետական մարդիկը շանացին Հայերը տարահանողը, որպէսզի անոնք վերջ տան իրենց հիմար իսկ այնքան վնասակար այս վերաբերումին: Բայց «կոմիտաճի» ու զաշնակցականի գլուխը արգելք ճանդիտացան:

Օսմանեան պետությունը Հայերուն ալ կայսրություն էր: Օսմանցիներու Ուրիշ ճար կայա:

ԶՈՒԻՅԵՐԻՈՅ ՓՈՒՏ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԹՐՔԱՆՊԱՏ ԱՐԱՅԱՅԱՅՏՈՒԹԻՆՆԵՐԸ

Զուիցերիոյ փոխ նախագահ եւ տնտեսութեան նախարար Փաքալ Քուլփին անցեալ Երեքշաբթի արժեզրկեց Օսմանեան կայսրութեան կողմէ Հայերու նկատմամբ 1915ին կատարուած ջարդերը իրրեւ ցեղասպանությունից ճանչնալու խորհրդարանին ներկայացուած եւ խորհրդարանականներու մեծամասնութեան կողմէ ստորագրուած առաջարկը:

Թուրքիոյ մէջ մեծ ներդրում կատարող պետություններէն է: Նշենք, որ Զուիցերիոյ խորհրդարանը Մարտ 18ին 200ի դէմ 115 քուէներով վաւերացուցած էր Հայկական Զեղասպանությունից մասին բանահարուած թուրքերու մէջ:

Զուիցերիոյ ազգային խորհուրդը կը ճանչնայ 1915ի Հայկական Զեղասպանությունից: Կը պահանջէ կառավարութեան հաշուի առնել այս օրը թուրքերի կեղծական Դրամատան համաձայն, Զուիցերիա թիւներուն մէջ:

Թուրքիա կատարած իր երկօրեայ այցելությունից ետ արտաքին քուլթուրի մը ընթացքին յայտնեց, որ այդ ճանաչումը «պարզապէս հաստատում մըն է»:

Զուիցերիոյ յայտնեց, որ այդ ճանաչումը «պարզապէս հաստատում մըն է»:

Զուիցերիոյ արտաքին քուլթուրի մը ընթացքին յայտնեց, որ այդ ճանաչումը «պարզապէս հաստատում մըն է»:

Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը կը տեղեկացնէ, թէ 20րդ դարու ցեղասպանություններուն մասին նոր գրքի մը հեղինակը՝ Օսմանեան Փաուրը Ապրիլ 28ին կ'ըսէր ինչպէս պետութեան իր գիրքին նուիրուած հանդիսությունից մը ընթացքին: Հանդիսությունից տեղի պիտի ունենայ Հայ Դատի Յանձնախումբին եւ այլ կազմակերպություններու հովանաւորութեամբ:

Իրաւանցի Օսմանեան Փաուրը յաճախած է ԵՂԱՅԻ Եւ Հարվարտ համալսարանի մարդկային իրաւանց: Ան Հարվարտ համալսարանի մարդկային իրաւանց «Քարտ» կեղծող գործադիր տնօրէնն է: Անոր գիրքը՝ «Դոնալդ Էմրալ» Ամերիկա եւ Ցեղասպանությունից մասնակաշարքը կ'անդրադառնայ Հայկական Զեղասպանությունից եւ թուրքերի կողմէ անոր ժխտումին, Հրէական Ողջակիւղումին, Քամպուտիոյ կարմիր կոմերներուն, քիւրտերու դէմ իրաքի յարձակումներուն, Ռուսաստանի եւ Պոստիոյ ցեղային մաքրագործումներուն: Ս. Փաուրը իր գիրքին մէջ կ'ընդգծէ, որ այս բոլոր ցեղասպանություններուն մէջ Միացեալ Նահանգներուն միջամտությունը անարարար էր: Ամերիկեան «Ուաշինգթըն Փոսթ» թերթը, «Փայլիշըրք Ռիբլի» պարբերականը եւ ուրիշներ գնահատած են Ս. Փաուրի գիրքը իրրեւ լաւ «ուսումնասիրութիւն մը, որ թէ՛ պատմություն է եւ թէ՛ գործունէ կոչ»:

Զեղասպանությունից

ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՈՒ ԸՍՍԱԶԱՅՆ՝

ՄԱՄՈԿՐԱՄՆԵՐԸ ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՅԿԵՂԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԱՀԵՐԸ ԿԸ ՆՈՒԱԶԵՑՆԵՆ

Մամոկրամներու օգտակարութեան մասին կասկածները փարատելու նպատակով, քաղցկեղի մասնազետները Մարտի կէսերուն շեշտեցին, որ անոնք կենք կը փրկեն:

11 երկիրներէ 24 մասնազետներու խմբակ մը ուսումնասիրած է մամոկրամներու օգտակարութեան կապուած շարք մը հետազոտութիւններու արդիւնքներ՝ ՄԱԿի Քաղցկեղի Հետազոտութեանց Միջազգային Գործակալութեան աշխատանքներուն ծիրէն ներս:

Գործակալութիւնը քաղցկեղի պատճառներուն եւ անոր կանխարգիւծման միջոցներուն մասին հետազոտութիւններու եւ ուսումնասիրութիւններու կը ձեռնարկէ:

Մամոկրամներու օգտակարութեան մասին հակասական յայտնարարումներ կ'ընեն չփոթի մասունք են, թէ արդեօք կ'արժէ՞ այդ քննութիւններուն ենթարկուիլ, ի՞նչ յաճախանութեամբ եւ ո՞ր տարիքէն սկսեալ:

Արդարեւ, անցնող քանի մը ամիսներուն քննադատութիւններ եղած են, թէ այդ քննութիւնները յաճախ սխալ արդիւնքներ կու տան:

Սակայն ՄԱԿի գործակալութիւնը կ'ըսէ, թէ այդ քննադատութիւնները անհիմն են: Անոր մասնազետները կը խոստովանին, թէ «սխալ դրական» արդիւնքներ կրնան մեծ մտահոգութիւն պատճառել, սակայն անոնք կը շեշտեն, թէ մամոկրամները օգտակար միջոց են նկատելու հիւանդութիւնը, որ տարեկան աշխարհի տարածքին կէս միլիոն մարդ կը սպաննէ:

Գործակալութեան ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, որ քննութիւններուն օգտակարութիւնը ամէնէն աւելի նշանակալից է 50 - 69 տարեկան կիներու պարագային:

Անիկա ստոյգ փաստ է՝ գտած քննութեան օգտակարութեան՝ 40 տարեկանէն վար կամ 69

տարեկանէն վեր կիներու պարագային:

Օքսֆորտ համալսարանի մասնազետներէն Վալըրի Պերալ, որ մասնազետ է ուսումնասիրութեան, կ'ըսէ, թէ յայտնաբերումները անկախ մասնազետներու համախոհութեան մը արդիւնք են:

Տասը տարուան ժամանակամիջոցի մէջ 50 - 69 տարեկան 1000 առողջ կիներու 10էն 20ը քաղցկեղի հարց պիտի դիմամարտէ եւ չորսէն վեց կին անոր պատճառով պիտի մահանայ: Մամոկրամը կրնայ մահերու թիւը իւրաքանչիւր 1000ի մէջ երկուքով նուազեցնել, կ'ըսէ Պերալ:

ՃԱՌԱՊԱՇԱԿՆԵՐՈՎ ՆՈՐ ԳԱՐՄԱՆՈՒՄ

Կուրծքի քաղցկեղի հիւանդներ օր մը կրնան ընտրանք ունենալ 25 անգամուան շարքի մը փոխարէն՝ վիրաբուժութեան ընթացքին ճառագայթներով մէկ անգամուան դարմանումի:

Հետազոտողներ այս մասին զեկուցում տուած են Մարտի վերջերուն, կուրծքի քաղցկեղի վերաբերեալ Պարսոյնայի մէջ տեղի ունեցած եւրոպական երրորդ խորհրդակցութիւնը ընթացքին:

Անոնց կարծիքով, նոր «ներվիրաբուժական»

ճառագայթներով դարմանումը կրնայ կիներու համար աւելի աժան եւ դիւրին ըլլալ եւ կրնայ բարելաւել կուրծքի քաղցկեղի դարմանումը՝ հիւանդներու, որոնք հետաւոր վարքեր կամ բարգաւաճման ընթացքի մէջ գտնուող երկիրներ կ'ապրին:

Ամսթերտամի քաղցկեղի հետազոտութիւններու հիմնարկի մասնագէտներէն տրեթ-էմիէլ Ռուժճըրգ կ'ըսէ, թէ նոր գրաւէ եւ չորսէն վեց կին անոր պատճառով պիտի մահանայ: Մամոկրամը կրնայ մահերու թիւը իւրաքանչիւր 1000ի մէջ երկուքով նուազեցնել, կ'ըսէ Պերալ:

Ճառագայթներով դարմանումը ընդհանրապէս տեղի կ'ունենայ օրական հերթականութեամբ՝ 6 շաբթուան ընթացքին, սպաննելու համար քաղցկեղային բջիւններ, որոնք վիրաբուժութեամբ կրնան հանուած չըլլալ:

Նոր քեքնիքով շարժական յատուկ մեքենայ մը վիրաբուժութեան ընթացքին ուռնի վարք մէկ անգամ ճառագայթներու արձակումին կ'ենթարկուի:

Ներկայիս Միլանոյի, Մատրիտի եւ Լոնտոնի մէջ հետազոտողներ քեքնիքի տարբերակները կը փորձարկեն հիւանդներու վրայ:

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ՄԵՔԵՆԱՅ ՄԸ՝ ԳԱՐՄԱՆՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Կուրծքի քաղցկեղի դարմանումներու բարելաւման աշխատանքներու ծիրէն ներս, հետազոտողներ վերջերս մշակած են նկարչական փորձի մեքենայի մը ծրագրերը:

Անոնք կ'ըսեն, թէ «միքրո-ալտրաբոլ»-ը, որ մարդկային քանի մը մագներու «խուրճ» մը բարակութիւնը ունի, քաղցկեղին մասին տեղեւոր ճարտար կ'ունենայ խոստման ից են, սակայն յաւելեալ հետազոտութիւններ անհրաժեշտ են:

Ճառագայթներով դարմանումը ընդհանրապէս տեղի կ'ունենայ օրական հերթականութեամբ՝ 6 շաբթուան ընթացքին, սպաննելու համար քաղցկեղային բջիւններ, որոնք վիրաբուժութեամբ կրնան հանուած չըլլալ:

Նոր քեքնիքով շարժական յատուկ մեքենայ մը վիրաբուժութեան ընթացքին ուռնի վարք մէկ անգամ ճառագայթներու արձակումին կ'ենթարկուի:

Ներկայիս Միլանոյի, Մատրիտի եւ Լոնտոնի մէջ հետազոտողներ քեքնիքի տարբերակները կը փորձարկեն հիւանդներու վրայ:

կան փոփոխութիւններով, որոնք կրնան ուռի մը յայտնուելէն տասնամեակ մը առաջ տեղի ունենալ:

Գիտնականներ կ'ըսեն, թէ նկատելով բջիւններուն մէջ նախաքաղցկեղային ամէնէն կանխահաս փոփոխութիւնները, կարելի պիտի ըլլայ հիւանդութեան ընթացքը կասեցնել:

Պիշի-Նիոմը եւ անոր գործակիցները կը յայտնեն, որ ի վերջոյ «միքրո-ալտրաբոլ»-ը «պիոփ-սի»ները (հիւսկէններու մասեր) անիմաստ պիտի դարձնեն:

ԼՈՅՍԻ ԾԱՄՐՈՎ «ՊԻՈՓՍԻ»

Նորագոյն քեքնիքներու ծիրէն ներս գիտնականներ մշակած են չափազանց արագ միջոց մը՝ գտնելու համար, թէ կուրծքի քաղցկեղը րաժանութիւնը քաղցկեղներու կանխարգիւծումը, կ'ըսէ ան:

Ան իր խմբակին հետ առաջինն է, որ այդ քեքնիքը կ'օգտագործէ Եւրոպայի մէջ, մինչ Մ. Նահանգներու մէջ անիկա արդէն իսկ փորձարկուած է:

Կուրծքի քաղցկեղը ընդհանրապէս կը սկսի կաթի խողովակներու բջիւններուն մէջ նախահարձակէ:

ԲԱՆԱԼԻ ՏՈՒԵԱԼՆԵՐ ԵՒ ԹԻԻԵՐ ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՅԿԵՂԻ ՄԱՍԻՆ

Կուրծքի քաղցկեղը, որ տարեկան աշխարհի տարածքին մօտաւորապէս 500 հազար գոհ կը խլէ, կիներու մօտ քաղցկեղի ամէնէն տարածուած տեսակն է: Հիւանդութիւնը դիմագրաւելու վտանգը տարիքի հետ կը բարձրանայ:

- Տղամարդիկ Եւրոպայէ կրնան կուրծքի քաղցկեղէ տառապիլ, սակայն պարագաները հազուադէպ են:

- Տարեկան աշխարհի տարածքին կուրծքի քաղցկեղի մէկ միլիոնը ցորտային կ'արձանագրուի:

- Հիւանդութեան պարագաներուն երեք - չորրորդը կը վերաբերի 50 տարեկանէ վեր կիներու: Հիւանդութիւնը հազուադէպ է 30 տարեկանէ փոքր կիներու մօտ:

- Կուրծքի քաղցկեղի պարագաներու 5էն 10 առ հարիւրին պատ-

ճառը BRCA1 եւ BRCA2 ծիներու ալլելներուն է:

- 30 տարեկանէն ետք ծննդաբերելը կամ գաւաի չունենալը հիւանդութիւնը դիմագրաւելու կնոջ մը հաւանականութիւնը կ'աւելցնէ: Կուրծքի քաղցկեղէ տառապող մօտիկ պարագայ մը ունենալը, ուշ «մենոպոզ»-ը, կանխահաս արբուցքը եւ սոնքութիւնը Եւրոպայէ տուեալներ են, որոնք կրնան հիւանդութեան հաւանականութիւնը աւելցնել:

- Հիւանդութիւնը կանխահասօրէն Եւրոպայէ եւ դարմանումը գայն յարգահարելու հաւանականութիւնը կ'աւելցնեն:

- Կուրծքի քաղցկեղը կը դարձանալի վիրաբուժութեամբ, քիմիական դարմանումով, ճառագայթներով եւ հորմոններով դարմանուցնելով:

ԲՈՅՍԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՄԱՐԳԻԿԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԵՆ ՔԱՂՅԿԵՂԻ ԳԵՄ

Կը գտնուի այն բոյսերուն մէջ, որոնք մարդու կողմէ հակասնկային նիւթերու չեն ենթարկուած:

Ան կ'ըսէ, թէ այս ձեւով բնութեան սորվելով՝ կարելի պիտի ըլլայ մշակել զեղեր, որոնք ուռներու մէջ գործօն կը դառնան, եւ որոնք հաւանաբար քաղցկեղի դարմանումներու իբրեւ հիմք կրնան ծառայել:

Գիտնականներ գտած են, թէ ռեսվերատրոլը կազմուելու համար պէտք ունի CYP1B1 անզիմին, որ տարբեր տեսակի ուռներու մէջ կը գտնուի: Անիկա ռեսվեր-

ոլը համար: Խմբակը հետազոտութիւնները կը շարունակէ գտնելու համար միջոցներ՝ օժանդակելու նպատակով անզիմին աշխատանքներուն:

ՅՈՐԵՆԸ ԿՐՆԱՅ ԿԵՆՍԱԿԱՆ ԸԼԼԱԼ ՔԱՂՅԿԵՂԻ ԵՒ ԱՅԼ ՀԻՄՆԱԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԵՋ

Հիւանդութիւններու դէմ պայքարին մէջ յայտնաբերուած է նոր զէնք մը՝ ցորենը: Մ. Նահանգներու Քանսասի նահանգի համալսարանի կենսաբի-

միագէտ Տոլորէս Թաքեր-մոթօ կ'ըսէ, թէ նորագոյն հետազոտութիւնները ցոյց տուած են, որ ցորենը կը պարունակէ ուստիլին «սիթոքսին»-ներ, որոնք բանալի են անոր կարողականութեան՝ պայքարելու համար հաստ աղիքի քաղցկեղի եւ թերեւս նաեւ՝ շաքարախտի եւ սրտի հիւանդութիւններուն դէմ:

Թաքերմոթօ կ'ըսէ, թէ անցեալին կը կարծուէր որ, ցորենին մէջ գտնուող ֆիպրը քաղցկեղը կը կանխարգիւծէ, Ծարը՝ էջ 10

ԾԻՆԱՅԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԿՐՆԱՅ ՀԱՍՏ ԱՂԻՔԻ ՔԱՂՅԿԵՂԸ ԿԱՆԽԱՀԱՍՕՐԵՆ ՆԿԱՏԵԼ

Հաստ աղիքի քաղցկեղի կապուած նոր քննութիւն մը, որ կրնայ յայտնաբերել հիւանդութեան սկզբնական շրջանին խանգարուող ծին մը, կրնայ տարեկան հազարաւոր մահեր կանխարգիւծել, կ'ըսեն հետազոտողները:

Քննութիւնը, որ մշակուած է մեքիկեան Ճոնզ Հոփքինգ եւ այլ հիմնարկութիւններու հետազոտողներուն կողմէ, կը կայանայ հաստ աղիքի բջիւններէն Ա. Տէ. Էն-ի շատ փոքր քանակութիւններ առնելու մէջ (բջիւնները կը գտնուին կղկղանքի մէջ), քննելու համար էյ. Փի. Սի. կոչուած ծին մը:

Հաստ աղիքի քաղցկեղի պարագային, նշեալ ծինը առաջիններէն է, որ անբնական կը դառնայ, հետեւաբար, կ'ըսեն գիտնականներ, եթէ կարելի ըլլայ նկատել, թէ այդ ծինը ալիստերաժէ կամ փոխուած, կարելի պիտի ըլլայ նաեւ փրկել աշխարհի տարածքին տարեկան այդ քաղցկեղին պատճառով մահացող կէս միլիոն մարդոցմէ շատերը:

Յարդ քննութիւնը օգտագործուած է միայն փոքր թիւով հիւանդներու պարագային: Անիկա պէտք է կիրարկուի մեծ թիւով մարդոց կողմէ եւ փաստուի, որ մահերու համեմատութիւնը կրնայ նուազիլ, որպէսզի բժիշկներ ինքնավստահ ձեւով ըսեն, թէ օգտակար է անիկա:

Մասնագէտները կը յուսան, որ քննութիւնները կարելի ըլլան սկսելու 2004ին:

ԾԻՆԱՅԻՆ ԳԱՐՄԱՆՈՒՄԸ ԿԸ ԿԾԿԸ ԱՌՆԵՏՆԵՐՈՒ ՀԱՍՏ ԱՂԻՔԻ ՔԱՂՅԿԵՂԱՅԻՆ ՈՒՌԵՐԸ

Յրանսացի գիտնականներ վերջերս ծինային անձնասպանական դարմանումի միջոց մը գործածած են՝ առնէտներու մօտ հաստ աղիքի քաղցկեղի տարածումը կասեցնելու համար:

Միայնիկ անձնասպանական դարմանումը, ծինային նիւթ կ'օգտագործէ անվնաս մասնիկ մը վերածելու համար մահացող գեղի, որ միայն քաղցկեղային բջիւններ թիրախ կ'ունենայ:

Անիկա կը կանխարգիւծէ քիմիական աւանդական դարմանումի երկրորդական ազդեցութիւնները, որովհետեւ առողջ բջիւններու վնաս չի հասցնում:

Յրանսայի ԻՆՍԵՐՄ հետազոտութիւններու ազգային հիմնարկին հետազոտողները ստամոքսային մասերէ մը Ա. Տէ. Էն. տեղադրած են ուռներու բջիւններու մէջ, ապա զանոնք սրսկուած են առնէտներու մորթին տակ կամ ուղղակի ուռներուն մէջ: Առնէտներու քաղցկեղը սրսկուածէն առաջ տարածուած է հաստ աղիքէն անդին:

Ապա առնէտները սրսկուած են քիմիական դարմանումի յատուկ թունաւոր նիւթով մը, որ յարձակած է առնէտներու լեարդին հասած քաղցկեղին վրայ:

30 օր ետք լեարդին մէջ ուռերը չուրը 70 առ հարիւրով կծկուած են՝ բաղադրուած առնէտներու այն խմբակին, որ նման դարմանում չէ տուցած:

Գիտնականները, որոնք կը յուսան մարդոց վրայ փորձարկումներու սկսիլ մօտ ատենէն, կ'ըսեն, թէ ծինային անձնասպանական դարմանումը կը մղէ մարմնին բնական պաշտպանութեան դրութիւնը, որ յարձակի մարմնին այլ տեղերը տարածուած ուռներուն վրայ:

Հաստ աղիքի քաղցկեղը երկրորդ ամէնէն հասարակ քաղցկեղն է արեւմտեան բազմաթիւ երկրներուն մէջ: Անոր համեմատութիւնները աւելի բարձր են ճարտարաբուժականացած աշխարհին մէջ, քան՝ բարգաւաճման ընթացքի մէջ եղող երկիրներուն մէջ:

ՈՒՍԻՕ ԱԼԻՔՆԵՐ ԵՐԻՎԱՄԻ ՔԱՂՅԿԵՂԱՅԻՆ ՈՒՌԵՐ ԿԸ ՔԱՂՅԵՆ

Քաղցկեղային ուռեր քանդելու նոյն «Ենեթի»-ով, գոր կը գործածուի ռատիօ նշաններ զրկելու համար, յուսատու արդիւնքներ ցոյց տուած է կարգ մը հիւանդներու մօտ, ըստ ամերիկացի մասնագէտներուն:

Ճոնըթըն Լուվին կ'ըսէ, թէ քեքնիքը կ'օգտագործուի փրոսթրի, կուրծքի, ուղեղի, աղիքի եւ այլ տեսակի քաղցկեղներու դարմանումին համար: «Որեւէ պատճառ չկայ, որ անիկա մարմնին որեւէ մէկ այլ տեղը չօգտագործուի»:

Էմ. Ար. Այ.ի միջոցով վիրաբուժը անմիջապէս կրնայ ըսել, թէ ուռը քանդուած է, թէ անհրաժեշտ է անդամ մը եւս գործածել ելեկտրոն ծայրով ստեղծել, որ զէպի ուռ կ'առաջնորդուի Գէ. ճառագայթներու սարքով:


«Գործողութիւնը» 10էն 30 վայրկեանի պէտք ունի՝ ասեղ-ուռ հաղորդակցութեան համար՝ 2,5 - 7,5 սմ. տրամագիծով գունդ մը «եփելու» համար: Մեռած բջիւնները կը ձուլուին մարմնին մէջ, ուր ուռնի հիւսկէնը ի վերջոյ կը կծկուի:

Հիւանդը թեթեւօրէն կը զգայագրկուի եւ ընդհանրապէս նոյն օրն իսկ տուն կրնայ վերադառնալ:

Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ (Աղբիւրներ՝ «ՌՈՅԹԵՐԸ», «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԵՒ «ԻՆՏԵՐՆԵՏԻՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԹԻՊՊԻՈՒՆ»)

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-Ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Ն



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. - ԱՆՍԱՐ՝ 1-2

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 19րդ հանգրուանին, անցեալ կիրակի օր, Պուրճ Զամուտի ֆաղաբապետարանի դաշտին վրայ Հ. Մ. Ը. Մ. պարտուեցաւ Անսարէն, 2-1 արդիւնքով:

Ա. կիսախաղին, Հ. Մ. Ը. Մ. ոչ մէկ առիթ ունեցաւ կողմնակից, մինչ Անսար՝ քանի մը առիթներ, որոնցմէ մէկը յաջողեցաւ կողմ վերածել, շնորհիւ Աճմէտ Շուսթի, որ Հ. Մ. Ը. Մ. ի պսակի բառակուսին մէջ մնացած էր բոլորովին աննկատ: Ան գլուխով դիւրաւ նշանակեց կողմ, որմէ քիչ ետք Ֆէտի Ղարբն արդիւնքը պիտի բարձրացնէր երկուքի (37րդ վայրկեանին), սակայն ան հակառակ բերդապահ Սադո Էսֆիճեանը գերազանցելուն՝ գնդակը հարուստեց ռուբը:

Բ. կիսախաղին, Հ. Մ. Ը. Մ. նշանակեց իր հաւասարութեան կողմ (60րդ), շնորհիւ՝ ետևորտալ ֆիթըր Պազիլի, որ իր գլխու հարուստով լուրջ պարտութեան մատնեց Անսարի բերդապահը:

70րդ վայրկեանին նոյնիսկ Աճմէտ Շուսթի նշանակեց Անսարի երկրորդ կողմ, շատ նեղ անկիւնէ մը պարտութեան մատնելով բերդապահ Սադոն: Նախքան այս կողմ նշանակուիլը, Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկ Մահմուտ Թահահան ստացաւ կարմիր քարտ (64րդ):

Պարագլուխի դիրքը դրաւ Նրժմէ դժուարութեամբ պարտութեան մատնեց Անսար, (3-2) երբ իր յաղթանակի կողմ նշանակեց մրցումին կորսուած վայրկեաններուն (94րդ), շնորհիւ Պիլալ Ֆլէյֆէլի, որ Ա. կիսախաղին նշանակած էր Նրժմէի երկրորդ կողմ (43րդ): Նրժմէի առաջին կողմ նշանակած էր Մոհամէտ Հալաուա (35րդ):

Հ. Մ. Մ. արձանագրեց եղանակի իր չորրորդ յաղթանակը, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով ԱՀԻ Սայտան: Աճմէտ Քրայէմ (14րդ), Հասսան Իպրահիմ (29րդ) եւ Համլէթ Միթարեան (70րդ) նշանակեցին Հ. Մ. Մ. ի կողմը, իսկ Մարիո Քոնաթի՝ հարակի կազմին կողմ (17րդ):

Ստորեւ՝ 19րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Ռասիկ - Թատամոն Սուր	0-2
Հ. Մ. Մ. - Անիլ Սայտա	3-1
Պրժ - Սաթես	0-2
Սալամ - Շապապ Սահել	0-2
Նրժմէ - Անտ	3-2
Հ. Մ. Ը. Մ. - Անսար	1-2
Ախա Ալեյ - Սաֆա	1-2

ԽՈՒՄԲ	Մ.	Ց.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԺՏ
1.- Նրժմէ	19	14	4	1	48	17	46
2.- Մաթես	19	14	4	1	41	23	46
3.- Թ. Սուր	19	11	7	1	39	13	40
4.- Սահել	19	12	4	3	35	19	40
5.- Սաֆա	19	11	3	5	37	25	36
6.- Սալամ	19	9	3	7	30	23	30
7.- Պրժ	19	7	4	8	32	33	25
8.- Ախա	19	7	3	9	21	27	24
9.- Անտ	19	5	7	7	26	30	22
10.- Անսար	19	5	6	8	19	25	21
11.- Հ. Մ. Մ.	19	4	4	11	23	36	16
12.- Ս. Սայտա	19	2	3	14	17	43	9
13.- Հ. Մ. Ը. Մ.	19	1	4	14	17	38	7
14.- Ռասիկ	19	-	6	13	11	44	6

ՊՈՒՆՏՍՄԱՆԻԿ

ՊԱՅԵՐ ԼԵԻԵՐՔՈՒԶԸՆ ԱՄՐԱՊԵՆԵՑ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պունտսլիգա) 29րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Պայեր Լեյերքուպը 4-2 արդիւնքով յաղթական վերադարձեալ է ետք Քայլըրսլայտըրնի դաշտէն, ամրապնդեց իր դիրքը եւ չորս կէտի առաւելութիւն ունեցաւ իր անմիջական մրցակիցին, 2րդ դիրքը գրաւող Պրուսիա Տորթնուսի վրայ, որ 3-2 արդիւնքով պարտուած հեռացաւ Շտրալսըրի դաշտէն, կիւլով եղանակի իր հինգերորդ պարտութիւնը:

Քայլըրսլայտըրնի դէմ տեղի ունեցած մրցումին, Ուլֆ Քրիշթըն (առաջին վայրկեանին), Օլիվըր Նեօվիլ (16րդ), Միքայել Պայաք (77րդ) փենսաթիւղով եւ Տիմմիթար Պերպարով (86րդ), նշանակեցին Լեյերքուպընի կողմը:

Շտրալսըր - Պրուսիա Տորթնուս մրցումին, հիւրընկալ կազմին կողմը նշանակեցին՝ Եոն Տանտի (33րդ), Սիլվիո Մէնզըր (37րդ) եւ Վիտրի Կանէպ (64րդ), իսկ Տորթնուսի կողմը՝ Քրիսթիան Վեօրնս եւ Եան Քուլըր (78րդ):

Համպուրկ - Պայեր Միլիտի մրցումը, որուն ներկայ էր աւելի քան 55 հազար համակիր, վերջ գտաւ 0-0 արդիւնքով:

Շայթ չկրցաւ օգտուիլ Պայեր Միլիտի արձանագրած հաւասարութեան եւ բարձրասլայ 3րդ դիրք, որով հետեւ իր կարգին հաւասարութիւն մը արձանագրեց վերջին դիրքը գրաւող Քէօլսի հետ (1-1):

Ստորեւ՝ 29րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Քէօլս - Շայթ	1-1
Վերտըր Պրեմըն - Հանպա Ռոսթոք	4-3
Համպուրկ - Պայեր Միլիտի	0-0
Նիւրնպէրկ - Վոլֆսպուրկ	3-0
Պրուսիա Մէնչըն - Հերթա Պերլին	3-1
Քրայպու - Տրայպուրկ	2-0
Շտրալսըր - Պրուսիա Տորթնուս	3-2
1860 Միլիտի - Չանքթ Փաուլի	4-2
Քայլըրսլայտըրն - Պայեր Լեյերքուպըն	2-4

ԳԱՍԱԻՌՈՒՄ	ԿԵՏ
1.- Պայեր Լեյերքուպըն	62 (71-33)
2.- Պրուսիա Տորթնուս	58 (52-26)
3.- Պայեր Միլիտի	55 (54-20)
4.- Շայթ	55 (47-28)
5.- Հերթա Պերլին	52 (54-32)
.....
16.- Տրայպուրկ	24 (28-51)
17.- Չանքթ Փաուլի	21 (31-57)
18.- Քէօլս	20 (18-54)

ՖՈՐՄԱՆԻԿ I

ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԵՐ ԸԱՆԴԻՍԱՅԱԲ ԱՌԱՋԻՆ՝ ՊՐԱՋԻԼԻ ԿՐԱՆ ՓՐԻԿՆ

Ֆորմիլա 1ի 2002ի աշխարհի ախոյեանութեան երրորդ կրան փրիկ, որ տեղի ունեցաւ անցեալ կիրակի օր, Պրայիլի մէջ, վերջ գտաւ գերմանացի Միքայել Շումախըրի (Ֆեռարի) յաղթանակով, որ այս եղանակին առաջին անգամ ըլլալով կը մասնակցէր իր նոր ինքնաշարժով: Նախորդ երկու կրան փրիկներուն ան մասնակցած էր անցեալ տարուան ինքնաշարժով:



Միքայել Շումախըր՝ դարձեալ առաջին

Շումախըր, որ իր ասպարէզին ընթացքին իր 55րդ տիտղոսին կը տիրանար, առաջին լէփին պսակ արկած մը ունեցաւ, երբ անոր ինքնաշարժը թեթևօրէն բախեցաւ քունամիացի վարորդ Խուան Փալլո Մոնթոյայի Ուիլիըմսի Մոնթոյայ Շաքսթ օրուան փոփոխուող մրցումներուն գրաւած էր առաջին դիրքը: Այդ արկածէն տուժող եղաւ Մոնթոյայ. ան ժամանակ կորսնցուց՝ նորագուծեան ընթացքին եւ 2րդ լէփին կը գտնուէր միայն 20րդ դիրքին վրայ: Սակայն հակառակ ատոր, ան մրցումը աւարտեց հինգերորդ դիրքին վրայ:

Յաջորդաբար 8րդ տարին ըլլալով պրայիլի Ռուպիան Պարիքելլո իր երկրին մէջ տեղի ունեցող կրան փրիկ չկրցաւ աւարտել, որովհետեւ 17րդ լէփին սկիզբը շարժակի խանգարում ունենալով՝ ստիպուած լքեց մրցումը: Պարիքելլո կը մասնակցէր իր ասպարէզի 150րդ կրան փրիկին:

Յարդ ոչ մէկ պրայիլի վարորդ կրցած է կէտ ապահովել ինքնաշարժին մէջ՝ երեք անգամ աշխարհի ախոյեան հանդիսացած հանգուցալ պրայիլի Միրթոն Սեննայի մահէն ետք (1994էն):

Բրիտանացի Տէյվիտ Քուլթարտ (Մաքլարըն), որ իր առաջին չորս կէտերը յաջողեցաւ ապահովել՝ երրորդ դիրքը գրաւելով, բարձրաբար փոտիում, Ուիլիըմսի գերմանացի վարորդ Ռայֆ Շումախըրի հետ, որ հանդիսացաւ երկրորդ:

Նշենք, թէ նախքան 71րդ եւ վերջին լէփը, պրայիլի ֆուտբոլիստ Փելէ ուղղուեցաւ ժամանման գիծ, ճօճելու համար կրան փրիկին աւարտը հաստատող դրոշակը:

Ստորեւ՝ Պրայիլի կրան փրիկն (306 քմ.) արդիւնքները.

- 1.- Միքայել Շումախըր (Գերմանիա) Ֆեռարի 1 ժամ 31' 43"
- 2.- Ռայֆ Շումախըր (Գերմանիա) Ուիլիըմս 1 ժամ 31' 44"
- 3.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն 1 ժամ 32' 42"
- 4.- Ենսըն Պաթըն (Բրիտանիա) Ռընո 1 ժամ 32' 50"
- 5.- Խուան Փալլո Մոնթոյայ (Քոլումբիա) Ուիլիըմս 1 ժամ 32' 51"
- 6.- Միքա Սալո (Ֆինլանդիա) Թոյոթա 1 լէփ ուշ
- 7.- Էտի Ըրվայն (Բրիտանիա) Ժակուար 1 լէփ ուշ
- 8.- Փետրո տը Լա Ռոպա (Սպանիա) Ժակուար 1 լէփ ուշ
- 9.- Թաքումա Սաթո (Ճապոն) Ճորտըն 2 լէփ ուշ
- 10.- Ժաք Վիլընսով (Քանադա) ՊԱՐ 2 լէփ ուշ
- 11.- Մարք Ուեպըր (Աւստրալիա) Միլարտի 3 լէփ ուշ
- 12.- Քիմի Ռայթընըն (Ֆինլանդիա) Մաքլարըն 3 լէփ ուշ
- 13.- Ալեքս Եունկ (Մալեզիա) Միլարտի 4 լէփ ուշ

Ստորեւ՝ վարորդներուն դասաւորումը.

- | ԿԵՏ |
|--|
| 1.- Միքայել Շումախըր (Գերմանիա) Ֆեռարի 24 |
| 2.- Ռայֆ Շումախըր (Գերմանիա) Ուիլիըմս 16 |
| 3.- Խուան Փալլո Մոնթոյայ (Քոլումբիա) Ուիլիըմս 14 |
| 4.- Ենսըն Պաթըն (Բրիտանիա) Ռընո 6 |
| 5.- Քիմի Ռայթընըն (Ֆինլանդիա) Մաքլարըն 4 |
| Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն 4 |
| 7.- Էտի Ըրվայն (Բրիտանիա) Ժակուար 3 |
| 8.- Մարք Ուեպըր (Աւստրալիա) Միլարտի 2 |
| Նիք Հիտֆելտ (Գերմանիա) Սաուպըր 2 |
| Միքա Սալո (Ֆինլանդիա) Թոյոթա 2 |
| 11.- Ֆելիքս Մասսա (Պրայիլ) Սաուպըր 1 |

- ՍՏՈՐԵՒ՝ խումբներուն դասաւորումը.
- 1.- Ուիլիըմս 20 կէտ
- 2.- Ֆեռարի 24 կէտ
- 3.- Մաքլարըն 8 կէտ
- 4.- Ռընո 6 կէտ
- 5.- Ժակուար 3 կէտ
- 6.- Միլարտի 2 կէտ
- 7.- Միլարտի 2 կէտ
- 8.- Թոյոթա 2 կէտ

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԿԻ ՄՐՁԱՆԱՐԸ

ՊԱՍԹԻԱ - ԼՕՐԻԱՆ՝ ԱՒԱՐՏԱԿԱՆ

Ֆրանսայի ֆուտբոլի բաժակի մրցաշարքի կիսաւարտական հանգրուանի մրցումներուն, Լօրիան եւ Պասթիա պարտութեան մատնելէ ետք իրենց մրցակիցները, ապահովեցին աւարտական մրցումին իրենց ստանդարտը, յետ երկարաձգման, շնորհիւ Թոնի Վէրէլի նշանակած կողմին (94րդ):

Ֆրանսայի ֆուտբոլի 0 արդիւնքով պարտութեան մատնեց Բ. դասարգի Նիմը, շնորհիւ Մալիք Տիփի նշանակած կողմին (74րդ): Նոյն արդիւնքով Պասթիա պարտութեան մատնեց Սըտանը, յետ երկարաձգման, շնորհիւ Թոնի Վէրէլի նշանակած կողմին (94րդ):

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՍԵՆԱԼ ԳՐԱԲԵՑ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 32րդ հանգրուանի մրցումներէն ետք (որոնք տեղի ունեցան անցեալ Շաքսթ օր), երկ տեղի ունեցան նաեւ 33րդ հանգրուանի մրցումները, որոնց արդիւնքներուն լոյսին տակ, դասաւորումը կրեց փոփոխութիւն:

Արսենալ երկ 3-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ ետք Չարլթընի դաշտէն, գրաւեց դասաւորման պարագլուխի դիրքը, մէկ կէտի առաւելութիւն ունենալով Լիվըրպուլի վրայ (2րդ), իսկ երկու կէտի առաւելութիւն՝ Մանչեսթըր Եունայթըտի (3րդ) վրայ, որոնք երկ մրցում չկատարեցին, իրենց մրցումները նախապէս կատարած ըլլալով: Արսենալ տակաւին ունի պակաս մրցում մը եւ յաղթանակի պարագլուխ՝ ամրապնդած կ'ըլլայ պարագլուխի դիրքը: Չարլթընի դէմ տեղի ունեցած մրցումին, Արսենալի կողմը նշանակեցին Թիերի Հանրի (16րդ եւ 25րդ) եւ Ֆրետերիք Լիուսկայէր (21րդ):

Շաքսթվերջին, Արսենալ նոյն արդիւնքով պարտութեան մատնած էր Սանտըրլէնտը, շնորհիւ՝ Փաթրիք Վիլյամսի (2րդ), Տենիս Պերկամփի (4րդ) եւ Սիլվէն Ուիլյոթտի (30րդ) նշանակած կողմերուն:

Լիվըրպուլ անցեալ շաքսթվերջին մնացած էր պարագլուխի դիրքին վրայ՝ 2-0 արդիւնքով պարտութեան մատնելով Չարլթընը, շնորհիւ՝ Վլատիմիր Սմիլեի (23րդ) եւ Մալքըլ Օուրնի (36րդ) կողմէ նշանակուած կողմերուն:

Իր կարգին, Մանչեսթըր Եունայթըտ արձանագրած էր յաղթանակ մը, Լիծի դաշտին վրայ, 4-3 արդիւնքով: Եունայթըտի կողմը նշանակեցին Փոլ Սքուլ (9րդ), Օլէ Կիւնար Սոլսքիար (37րդ եւ 39րդ) եւ Ռայըն Կիլկ (55րդ):

Ստորեւ՝ 32րդ եւ 33րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

32րդ ՀԱՆԳՐՈՒՄ		
Արսենալ - Սանտըրլէնտ		3-0
Պոլթըն - Ասթոն Վիլա		3-2
Չելսի - Տերսի Գաուենթի		2-1
Լիծ - Մանչեսթըր Եունայթըտ		3-4
Լայսթըր Սիթի - Պլեյքպըրն		2-1
Լիվըրպուլ - Չարլթըն		2-0
Միտլըպորո - Թոթեմհամ		1-1
Սաութհեմթըրն - Ֆուլհեմ		1-1
Ուեսթ Համ - Իփսուիչ		3-1
Նիւքեալ - Էլքըթըրն		6-2

33րդ ՀԱՆԳՐՈՒՄ		
Չարլթըն - Արսենալ		0-3
Տերսի Գաուենթի - Միտլըպորո		0-1
Էլքըթըրն - Պոլթըն		3-1
Ֆուլհեմ - Ուեսթ Համ		0-1
Իփսուիչ - Չելսի		0-0
Սանտըրլէնտ - Լայսթըր Սիթի		2-1
Թոթեմհամ - Լիծ		2-1
Ասթոն Վիլա - Նիւքեալ		(այսօր)

ԳԱՍԱԻՌՈՒՄ	ՄՐՑ.	ԿԵՏ
1.- Արսենալ	32	69 (66-32)
2.- Լիվըրպուլ	33	68 (55-26)
3.- Մ. Եունայթըտ	33	67 (82-44)
4.- Նիւքեալ	31	59 (60-42)
5.- Չելսի	33	57 (60-32)
.....
18.- Պլեյքպըրն	31	32 (40-43)
19.- Տերսի Գաուենթի	33	29 (30-54)
20.- Լայսթըր Սիթի	33	22 (24-58)

ՉԷՄՓԻՆԶ ԼԻԿ

ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ՝ ՔԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆԻ ՃԱԿԱՏՈՒՄՆԵՐԸ

«ՉԷՄՓԻՆԶ ԼԻԿ»ի քառորդ աւարտականի երթի մրցումներուն, այսօր՝ Երեքշաբթի տեղի կ'ունենան երկու ճակատումներ, մինչ մնացեալ երկու ճակատումները տեղի պիտի ունենան վաղը՝ Չորեքշաբթի:

Այսօրուան մրցումները սկսուածով կը սպասուին ըլլալ աւելի հետաքրքրական եւ տաք:

Ստորեւ՝ այսօրուան եւ վաղուան մրցումներուն յայտագիրը (մրցումները տեղի պիտի ունենան ժամը 21:45ին՝ Պէյրուի ժամով):

